

ԱԿԱՆԱՎՈՐ ԴԵՄՈԿՐԱՏԸ

(Մ. ՄԱՄՈՒՐՅԱՆ)

Մատթեոս Մամուրյանը հայ գրականության այն մեծ երախտավորներից մեկն է, որն իր գրական, հրապարակախոսական և հասարակական-քաղաքական գործունեությամբ նոր էջ գրեց մեր ժողովրդի պատմության մեջ: Հանդես գալով հիմնականում 19-րդ դարի երկրորդ կեսից և գործելով հասարակական կյանքի գրեթե բոլոր ասպարեզներում, նա անվերապահորեն կանգնեց հայ մտավորականության առաջադիմորեն տրամադրված ներկայացուցիչների բանակում և իր ամբողջ գործունեությամբ ձայնակցեց մեծանուն հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանին, այսպիսով, իրավացիորեն վաստակելով «Նալբանդյանի զինակից» պատվավոր անունը:

Չափազանց ընդարձակածավալ է Մատթեոս Մամուրյանի գործունեության բնագավառը: Մի կողմից՝ «Անկլիական նամականի», որտեղ հեղինակը համարձակորեն առաջ է քաշում տնտեսագիտական, փիլիսոփայական, հասարակագիտական, սոցիալ-քաղաքական բնույթի արմատական հարցեր և այդ ամենը վերլուծում է այնպիսի հմտությամբ, որ նույնիսկ այսօր չի կարելի կարդալ առանց հիացմունքի: Մյուս կողմից հին և միջին դարերի պատմության դասագրքեր, այլևայլ ընթերցարաններ և հայոց լեզվի շարադրության ձեռնարկներ դպրոցահասակ «մանկոթիներու» համար: Մի կողմից վիպագրի անառարկելի ունակություն և այդ ունակության փայլուն դրսևորումը հանդիսացող «Սև լերին մարդը» վեպը, որը մի անգամ ևս իր գրական իրավունքների մեջ հաստատեց ռոմանտիկական գրական ուղղությունը արևմտահայ իրականության մեջ, մյուս կողմից՝ ֆրանսիական բնագրերից կատարված բազմաթիվ թարգմանություններ, որոնց թվում այնպիսի գործեր, ինչպիսիք են Վոլտերի «Զատիկը», «Միկրո-մեգասը», «Ճերմակն ու սևը», Ալ. Դյումայի «Ամուրին», «Քսան տարի ետքը», «Երեք հրացանակիցները», Ժյուլ Վեռնի «Աշխարհի շրջանն ութսուն օրվան մեջ», «Խորհրդավոր կղզին», Վ. Սկոտի «Իվանոեն», Գյոթեի «Վերթերը», Է. Սյուի «Փարիզի գաղտնիքները», Բոմարշեի «Սևիլյան սափրիչը» և այլն: Մի կողմից, վերջապես, զգաստ և գիտակ հրապարակախոս, հայկական հասարակական կյանքի հիանալի տեսաբան, կրքոտ պոլեմիստ, որի «Վրոյր», «Շահնուր», «Մ.Մ.», «Ապրսամ», «Վ.» ստորագրություններ ունեցող հոդվածները, պամֆլետներն ու ֆելիետոնները որոշակի երանգ ու բովանդակություն էին հաղորդում հայկական

դեմոկրատական մտքին, մյուս կողմից՝ խիստ մասնագիտական, այսինքն՝ բժշկական ու բժշկագիտական բնույթի բրոշյուրներ և այլն, և այլն:

Հասկանալի է, որ այսպիսի խոշոր գործիչը, իհարկե, մասնակիորեն ու ոչ այնքան մեծ ընդգրկմամբ, չէր կարող չարժանանալ և իրոք արժանացել է ժամանակակիցների ու հաջորդների ուշադրությանը: Սկսած 1899 թվականից, երբ հրապարակայնորեն նշվեց նրա գրական-հասարակական գործունեության 50-ամյակը, մինչև այսօր, Մամուրյանը եղել է հայ բանասերների ու գրականագետների ուշադրության կենտրոնում: Պարբերական մամուլում ավել կամ պակաս ծավալուն հոդվածներով, աշխատությունների մեջ՝ Մամուրյանին նվիրված առանձին հատվածներով, դասագրքերում ու հայ գրականության ձեռնարկներում նրա գործը ներկայացնող գլուխներով, հանդես են եկել մեր մշակույթի բազմաթիվ ներկայացուցիչներ, որոնք, իրենց թույլ տված որոշ սխալներով ու միակողմանիություններով հանդերձ, հիմնականում ճիշտ գնահատականներ են տվել նրան:

Այսքան գործ կատարված լինելով հանդերձ, առ այսօր չկար համեմատաբար ամբողջական մի ուսումնասիրություն, ուր համակողմանիորեն վեր հանվեր Մատթեոս Մամուրյանի ամբողջ գործունեությունը, տրվեր այդ գործունեության գիտական բնութագրությունը՝ դիտված ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական և գրական դեպքերի ընդհանուր ֆոնի վրա: Այդպիսի աշխատության կարիքն առավել քան անհրաժեշտ էր այն պատճառով, որ Մամուրյան-հրապարակախոսին, Մամուրյան-գրողին ու թարգմանչին, կամ Մամուրյան-հասարակական գործչին տրված գնահատականները, իրենց որոշակի դրականով հանդերձ, ոչ միայն տառապում էին զգալի միակողմանիությամբ, այլև հաճախ բացասում էին իրար:

Վերջերս Երևանի պետական հրատարակչությունն իրագործեց միանգամայն գովելի մի նախաձեռնություն՝ լույս ընծայեց պատմական գիտությունների թեկնածու Հայկ Ղազարյանի «Մատթեոս Մամուրյան» մենագրությունը, որը իր՝ հեղինակի բնորոշմամբ, «Մամուրյանի մասին ամբողջական գիրք ստեղծելու համեստ փորձ է» (էջ 6):

Տալ Մամուրյանի գործունեության բնութագրությունը, – նախ նշանակում է մասնագիտորեն ծանոթ լինել այն միջավայրին, գրական-պատմական դեպքերին և սոցիալ-քաղաքական տեղաշարժերին, որոնք առկա էին 19-րդ դարի վերջին կեսին հայկական իրականության մեջ ընդհանրապես և արևմտահայ հատվածում առանձնապես: Չմոռանանք, որ

այդ ժամանակահատվածը մեր պատմության ամենաբարդ շրջաններից մեկն է, որտեղ նախ՝ առավել բյուրեղացած ձևով արդեն հանդես էին գալիս հայ դեմոկրատական և պահպանողական հոսանքներն իրենց պարագլուխներով, ամբողջ սրությամբ դնելով հասարակական կյանքի հանդեպ ունենալիք վերաբերմունքի հարցը: Ապա. իր բարձրակետին էր հասել հին հայոց «դասական» լեզվի՝ գրաբարի և «ատելի նորելուկի» աշխարհաբարի շուրջ մղվող պայքարը, ժամանակի հայ մտավորականությանը բաժանելով երկու իրարամերժ կուսակցությունների: Տեղի էր ունենում վերջապես, գրական ուղղություններից մեկի՝ կլասիցիզմի փոխարինումը գրական նոր ուղղությամբ՝ ռոմանտիզմով, այստեղից բխող բոլոր հետևանքներով և այլն: ՌԻստի հասկանալի է, որ լուրջ ջանքեր էին պահանջվում Հայկ Ղազարյանից, այսպիսի բարդ իրադրությունների պայմաններում կողմնորոշվել կարողանալու և դրա հետևանքով, իր նախընտրած հեղինակին գրա-պատմական այդ հորձանուտում «չկորցնելու» համար: Եվ «Մատթեոս Մամուրյան» մենագրությունը կարդալուց հետո, այս հարցին կարելի է անվերապահորեն դրական պատասխան տալ: Ղազարյանը հանգամանորեն, փաստ առ փաստ ուսումնասիրել է ժամանակաշրջանի հայ պարբերական մամուլը (օրինակ՝ «Արշալույս արարատյան», «Բազմավեպ», «Ծաղիկ», «Հանդես ամսօրյա», «Արևելյան մամուլ»), ուսումնասիրել է ազգային և ընդհանուր պատմությունը, խորապես ծանոթացել է դարը բնորոշող և դարի պատկերը ներկայացնող հասարակական-քաղաքական երևույթներին: Ասվածի պերճախոս վկայությունն են հանդիսանում գրախոսվող մենագրության հատկապես՝ «Մամուրյանը ժողովրդի սոցիալական դրության, Հայաստանի տնտեսական զարգացման ուղիների մասին», «Մ. Մամուրյանի ազգային-ազատագրական պայքարի գաղափարաբանությունը», «Մամուրյանը և գրականությունը» գլուխները, որոնք ամենևին էլ այդքան հաջողված ու ամբողջական չէին ստացվի, եթե հեղինակը հարցին չմոտենար առավել քան խնամքով ու գիտական բարեխղճությամբ:

Ոչ պակաս հաջողությամբ է կատարված «Հայկական նամականու» վերլուծությունն ու գնահատությունը, նույն խորագիրը կրող գլխում: Ինչպես հայտնի է, ինքը՝ Մամուրյանը իր այդ գործը գնահատել է որպես «պարապ ժամանց արդյունք», որպես մի երկասիրություն, որը «ինքնին գրական կամ պատմական արժեք մը չունի», որպես նյութեր ու փաստեր, «որոնք հարություն առնելու պետք չունենին» և այլն: Հայտնի է նաև, որ 1864 թվականից նամականիի ձևով «Ծաղիկ», «Մեղվի», «Կիլիկիայի», «Արևելյան մամուլի» և այլ պարբերականների էջերում հաջորդաբար լույս տեսնող «Հայկական նամականին» աչքի է ընկնում իր հակասականությամբ և հաճախ այնպիսի տպավորություն է թողնում, որ կարծես Մամուրյանը չի կարողանում

կողմնորոշվել հայկական հասարակական կյանքին առնչվող նույնիսկ ամենահիմնական հարցերում: Այս է պատճառը, որ «Հայկական նամականին» հաճախ է արժանացել այլընդայլ և կամայական մեկնաբանությունների, իսկ Մամուրյանի հայտնած «աննպաստ» կարծիքը իր գործի մասին, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ գրական համեստության սովորական դրսևորում, գրեթե միշտ հասկացվել է ուղղակի իմաստով: Ղազարյանը ճշտորեն մեկնաբանում է այդ թվացող հակասականությունը ոչ թե որպես հեղինակի աշխարհայացքային թերություն, այլ ստեղծագործություն կառուցելու յուրատիպ գտնված մի եղանակ, թուրքական գրաքննությունից խուսափելու համար: «Հրապարակախոսները, – գրում է նա, – ստիպած էին լինում կամ լռել, կամ «կուլ տալով» փոխել իրենց լեզուն... գրելու առանձին և յուրահատուկ հնարքներ գտնել: Հեղինակը ամեն կերպ կաշկանդել է իր գրիչը, անցքերի ու տեղեկությունների մասին խոսել այլաբանորեն, առանց իսկական անունները տալու, հաճախ ստիպված՝ մի փաստը կրկնել է մի քանի անգամ, և ամեն անգամ տարբեր մեկնաբանություններով, սակայն այս կամ այն կերպ ասել է այն, ինչ ցանկացել է ասել, իսկ ինչ չի կարողացել ասել, կախման կետեր է դրել...» (էջ 41): Հետագա շարադրանքի ընթացքում հեղինակը բերում է այս միտքն ապացուցող նորանոր փաստեր ևս:

Որոշ սխեմատիկությամբ հանդերձ, լավ է գրված ««Սև լերին մարդը» վեպի գաղափարական բովանդակությունը» գլուխը, որտեղ Ղազարյանը տալիս է Մամուրյանի այդ վեպի հիմնական բնութագիրը: Շարադրելով նրա ստեղծման ընդարձակ բանասիրական պատմությունը, հեղինակը համառոտ կանգ է առնում այնտեղ արծարծված գաղափարական կարևոր հարցերի վրա, որոնք բնորոշում են Մամուրյան-վիպագրին: Ճիշտ է Ղազարյանի այն պնդումը, որ «Սև լերին մարդը» վեպում Մամուրյանը հայ ժողովրդի ազատագրման հիմնական միջոցը համարում է զինված ապստամբությունը, որը հնարավորություն կտար հայրենի աշխարհում ապրող աշխատավորությանը իր ճակատի վրայից մաքրելու «անցյալի մրի հետքերը և ապացուցելու, որ ինքը ոչնչով էտ չի մնում ուրիշ ժողովուրդներից» (էջ 165): Իսկ այս բանին հասնելու համար Մամուրյանը ամբողջ սրությամբ առաջ է քաշում մի ուրիշ հարց. հայ ժողովրդի միասնականության, նրա ամբողջականության հարցը: 19-րդ դարում առանձնապես, և նրա երկրորդ կեսին հատկապես, երբ հայ ժողովուրդը զանազան եկեղեցական, դավանաբանական, գաղափարական և սոցիալ-տնտեսական ներհակությունների հետևանքով բզկտվել էր իրար հանդեպ թշնամությամբ լցված և իրար նկատմամբ միայն թշնամություն սերմանող հատվածների, այս պայմաններում, ազգային միասնության հարցը առանձնակի կարևորություն էր ստանում: Ահա թե ինչու ժամանակի բոլոր լուսամիտ մարդկանց նման, Մամուրյանին ևս

մտահոգում էր մեր ժողովրդի այս աննախանձելի վիճակը, որի դեմ նա հանդես էր գալիս իր հրապարակախոսական ամբողջ ավյունով: Եվ Ղազարյանը գիտակ վերլուծությունների միջոցով, կարողացել է հաջողությամբ բացահայտել «Սև լերին մարդը» վեպում դրսևորված՝ Մամուրյանի աշխարհայացքի այս կողմը: «Մամուրյանը գտնում էր, – գրում էր նա իր աշխատության 165-րդ էջում, – որ ազատագրական շարժման հաղթանակի ամենակարևոր գրավականը միասնությունն է»: Մի պնդում է սա, որի հետ չի կարելի չհամաձայնել:

Շատ կարելի է խոսել «Մատթեոս Մամուրյան» աշխատության արժանիքների մասին, սակայն ասվածներն էլ բավական են ցույց տալու համար, որ Ղազարյանի սույն ուսումնասիրությունը, որպես առաջին և ամբողջական գործը արևմտահայ մեր նշանավոր գործչի մասին, հիմնականում բռնել է քննությունը: Եթե չմոռանանք, որ Մամուրյանը մեր գրականության այն դեմքերից է, որի գործերում ինչքան ասես կարելի է հանդիպել իրար հակասող, անգամ իրար բացասող մտքերի, ապա Հ. Ղազարյանի՝ գրախոսվող աշխատության արժեքն ու նշանակությունը էլ ավելի որոշակի կդառնա:

Այդ աշխատությունն է՛լ ավելի լավ ու հաջողված տեսնելու նպատակով է, որ կամենում ենք մի քանի դիտողություն անել:

Թե «Անկլիական նամականին», և թե, մանավանդ, «Հայկական նամականին» պատմափիլիսոփայական-տնտեսագիտական աշխատություններ լինելուց բացի, մնում են որպես գեղարվեստական ստեղծագործություններ: Գեղարվեստական ստեղծագործություն կառուցելու այդ՝ այսինքն նամականիի ձևը, լայնորեն տարածված էր 18-19-րդ դարերի եվրոպական գրականության մեջ, և այդ էլ փոխ էին առել իրենց ուսումնասիրությունը Ֆրանսիայում ստացած հայ մտավորականները: Սակայն անդրադառնալով այդ երկու գործերին, զատ-զատ և հանգամանորեն վերլուծելով դրանք, Ղազարյանը չգիտես ինչու ամեննին քննության չի առնում այդ գործերն իբրև գեղարվեստական ստեղծագործություններ և առավել ևս, չի բացահայտում նրանց դերը 19-րդ դարի հայ գեղարվեստական գրականության գրա-պատմական պրոցեսում: Այնինչ հարկավոր էր նշել, որ այդ ժամանակ և դրանից հետո հրատարակված արևմտահայ մի քանի վեպերի հետ (Հ.Հիսարյան «Խոսքով և Մաքրուհի», Ա. Հայկունի «Էլիզա», Ս. Տյուսաբ «Մայտա», «Սիրանույշ», «Արաքսյա կամ վարժուհին», Ս. Տեր-Սարգսենց «Շահենն ի Սիպիր» և այլն) Մամուրյանի հիշյալ գործերը, «Արևելյան մամուլում» հրատարակվող նրա այլևայլ մանրապատում ստեղծագործությունները հանդիսացան հայ ռոմանտիկական գրականության հիմնաքարերը, որոնք իրենց անփոխարինելի դերը կատարեցին այդ ուղղության ձևավորման ու

ամրապնդման գործում: Այս տեսանկյունից մոտենալով, ակնհայտորեն երևում է «Սև լերին մարդը» վեպի գաղափարական բովանդակությունը» գլխի սխեմատիզմը: Հարկավոր էր կանգ առնել այդ վեպի կոմպոզիցիայի հետ առնչվող հարցերի վրա, որը քննության արժանի շատ կողմեր ունի իր մեջ, մանավանդ, երբ այն դիտարկում ենք հայկական իրականության պայմաններում: Հարկավոր էր գոնե ընդհանուր ձևով խոսել գրական տիպերի կերտման այն ռոմանտիկական եղանակների մասին, որը լայնորեն կիրառել էր Մամուրյանն իր վեպում, որոնք մեծ մասամբ գալիս էին եվրոպական գրականության՝ ռոմանտիկական գրական պրոցեսին պատկանող մեծ ու փոքր ստեղծագործություններից և ուղղակի արդյունքն էին նրանց ազդեցության: Այս ամենը, տարաբախտաբար, չի արված: Լավագույն դեպքում հեղինակը բավարարվում է մեկ-երկու անորոշ նախադասություններով կամ դասագրքային մակարդակի մի քանի նկատումներով միայն, որն իհարկե, չի կարող բավարար համարվել: Էլ չենք խոսում նրա վերաբերյալ, որ Մամուրյանի գրած և թարգմանած դրամատիկական գործերի մասին, որոնք, ի դեպ, իրենց կայուն տեղն ունեն հայ դրամատուրգիայի պատմության անդաստանում և վրիպել են մեր դրամատուրգիայի պատմաբանների տեսադաշտից, բայց որոնց մանրամասն ուսումնասիրությունը չափազանց շատ բան կբացահայտեր, – Ղազարյանը խոսում է ընդամենը տողատակի ծանոթագրության մեջ:

Հարկավոր էր քիչ ավելի մանրամասն կանգ առնել Մամուրյանի կատարած թարգմանությունների քննության վրա: Ղազարյանի այն միտքը, որ թարգմանությունների ասպարեզում ևս, Մամուրյանը որոշակի նպատակների էր հետապնդում, որ իր կատարած թարգմանություններով ևս նա արտահայտում էր այն դեմոկրատական գաղափարները, որոնք պրոպագանդում էր իր հրապարակախոսական հոդվածներով, միանգամայն ճշմարտացի է ու առարկություն չընդունող: Բայց, դժբախտաբար, այս ճիշտ միտքը հետագա շարադրանքի ընթացքում չի հիմնավորվում կայուն փաստերով և սնում է օդից կախ: Մեր ասածը պարզաբանելու համար բերենք միայն մեկ՝ հետևյալ օրինակը:

1854 թվականի վերջերից, Պոլսի «Մասիս» պարբերականը աստիճանաբար սկսում է հրատարակել Վոլտերի «Ճերմակ և սև» վիպակի արևմտահայերեն թարգմանությունը, որը ֆրանսերեն բնագրից կատարել էր Մ. Մամուրյանը: Չանցած մի տարի, «Մասիսը»՝ նույն Մամուրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Վոլտերի «Ժանո և Կոլեն», ապա և՝ «Միկրոմեգաս» վիպակները: Ինչպես և սպասելի էր, այս թարգմանությունները փոթորիկ հարուցեցին հայկական կղերա-

պահպանողականության ամբողջ բանակում: Դեռ դարասկզբից հայերը Վոլտերին որակել էին «չարաղետ», «չարափառ», «որոմնացան» և այլ «քնքույշ» բառերով, գիտությանը, հրապարակախոսությանը և, մանավանդ, կրոնին նվիրված նրա «դրությունները» հերքվում էին բազում ձևերով ու բազում անգամ, բոլորի հիշողության մեջ դեռ թարմ էին 1840 թվականի իզմիրյան դեպքերը, երբ քաղաքի երևելիները հախուռն բողոք բարձրացրեցին ֆրանսերեն լեզուն Մեսրոպյան վարժարան ներբերելու առիթով, քանզի ֆրանսերենը «հակառակասիրություն, անաստվածություն, Վոլթեր ըսել է», և այլն: Ուստի հասկանալի է, թե ինչու Վոլտերի՝ վերը հիշատակված թարգմանությունները դարձյալ պետք է տեղի տային թշնամական բնույթի՝ մեկից ավելի հոդվածների, ուղղված ինչպես մեծ ֆրանսիացու, այնպես էլ նրա հայ թարգմանչի դեմ, որոնց էլ պատասխան հոդվածներով պետք է հանդես գար հենց ինքը՝ Մամուրյանը: «Ի՞նչ է «Միկրոմեգասին» հանցանքը, – իրեն հատուկ կրքոտ տոնով հարցնում էր նա, – Միթե Վոլթերին գրչեն ծնի՞լն է: Բայց ամենուն հայտնի է, որ աս հռչակավոր մատենագիրը, իմաստասերը, պատմիչը, բանաստեղծը այնչափ բազմաթիվ գրվածք ունի, զորոնք կարդալը մարդուս կես կյանքին կարոտ է: «Երևակը» ամենեն ավելի «Միկրոմեգասին» դեմ վառեր բորբոքեր է. ինչո՞ւ համար. Աստծո գոյությունը և մեծությունը հռչակելուն և անոր փառքը կապտել ուզող ճիզվիթականաց դիպչելուն համա՛ր է: Վոլթերը կարդացողը մի՞թե անհավատ կըլլա: Պղատոն, Արիստոտել կարդացողը մի՞թե կռապաշտ կըլլա» («Մասիս», 1856, № 220):

Մամուրյանի՝ ինչպես գրական-հասարակական, այնպես էլ քաղաքական դիրքավորումը, ինչպես դժվար չէ նկատելը, երևում է առավել քան որոշակի ու հստակ, և այդ դիրքավորումը թարգմանությունից թարգմանություն ավելի է հստակվում ու ցցուն դառնում: Թարգմանությունների այսօրինակ քննությունը անշուշտ շատ նյութ կտար գրախոսվող գրքի հեղինակին, Մամուրյանի աշխարհայացքային ոգորումները ավելի պարզ ներկայացնելու համար. մի բան, որը, ինչպես արդեն ասացինք, չի արվել:

Եվ վերջապես, մի դիտողություն ևս. աշխատությունն ընդհանուր առմամբ գրված է գեղեցիկ հայերենով, բայց ամենևին էլ հազվագյուտ չեն ճապաղ, անկենդան նախադասությունները, անհաջող ու թանձրամարս ձևակերպումները, օրինակ. «Հրանտ Ասատուրը... կարողացել է պարզել, թե ովքեր են թաքնված այդ ԳԱՂՏՆԱՆՈՒՆԵՐԻՑ ՇԱՏԵՐԻ ՏԱԿԸ» (էջ 55), «Մեջ բերելով վերոհիշյալ մտքերը, չպետք է անտեսել ԵՎ ԱՅՆ, որ Մամուրյանը կապիտալիզմի, ընդհանրապես ԲՈՒՐՇՈՒԱԿԱՆ ԱՐԵՎՍՈՒՏՔԻ գովերգուներից չէր» (էջ 95), «Քննադատելով ռուսական ցարիզմը, համակրանք ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՎ Եվրոպայի ՄԱՍԻՆ...» (էջ

150), «Հրապարակախոսը քննադատական ԿՐԱԿ ԷՐ ՏԵՂՈՒՄ ԱՆԳԼԻԱՅԻ ԳԼԽԻՆ...» (էջ 152) և այլն: Կարիք կա՞սեսելու, որ նման ձևակերպումները, որոնցից, ցավոք սրտի, կարելի է էլի բերել, ամենևին էլ չեն խոսում հոգուտ հեղինակի և աշխատության մեջ տեղ չպետք է գտած լինելին:

Սովետական գրականություն, 1962, № 7, էջ 162